ինչ ծայրագոյն իշխանէ՝ որ իցէ կալով ՝ Ճեռացէ բանադրեալ, և 'ի տեղի նորա մացի տեղակալ նորայ մինչև բանադրեալն դատեսցի 'ի դատաստանի, եթէ առաջի ատենի կացցէ անպարտ կարի նորոգել նմայ և նստուցանել 'ի աթոռ պաշտօնի իւրոյ։

ԳԼՈՒԽ ՅԺԱ.

Աւարն ստացեալ 'ի թշնամեացէ 'ի ժամանակի պատերազմի ժամ պատեհի բաժանեսցի 'ի վերայ զինուորաց այս կերպիւ.

Ոսկի, երծաթ, ակունք և ամենայն զարդք ճոթանք, ձի և ամենայն անասունք, խաշին, ցորեան, եղ, ձէթ, գինի բոլորն հարկաւոր է հաւաքել և հուչակաւոր վաճառել, զի ով որ որ կամի գնեսցի զամենայն զոր ինչ գին որ ելցէ և գին ասացեալ աւարին բաժանեսցի այսպէս։

Բաժին Նախարարին 'ի մի հարիւրին.			5
Բաժին Սպարապետաց	»	»	. 10
Բաժին Ասպետաց	»	»	. 8
Բաժին Թօֆչի բաշունց	»	»	. 8
Բաժին Լրտեսպետաց	»	»	. 2
Բաժին Կերակրապետաց	»	»	. 2
Բաժին Երկրաչափապետաց	»	»	. 5
Բաժին Հազարապետաց	»	»	. 5